

ԻՐԱՆԱՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՒ ՄԱՍՈՒԼԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿՏԱԿԱՐԱՐՆԵՐ

Բանալի բառեր՝ իրանահայ տպագրություն և մամուլ, գրքեր, ազգային ժառանգություն, պահպանում, Իրան, հայ համայնք, գրաքննություն:

Keywords: Iranian-Armenian printing and periodicals, books, national heritage, preservation, Iran, Armenian community, censorship.

Իրանահայ տպագրության և մամուլի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն հայագիտական հետազոտությունների ամբողջացման, այլև հայության ներուժի ամբողջական բացահայտման տեսանկյունից:

Երկար դարեր ապրելով բուն հայրենիքի սահմաններից դուրս՝ իրանահայերը եղել են հայոց լեզվի, մշակույթի և հարուստ ավանդույթների կրողներն ու հարստացնողները: Իրանի հայ համայնքի կենսունակության գրավականն օտար երկրում ուծացման վտանգի դեմ մշտապես պայքար մղելն էր: Ազգային ինքնագիտակցության ոգին ու հայապահպանության գաղափարը վահան դարձնելով իր ինքնությունը խարխալող երևույթների դեմ՝ իրանահայությունը միաժամանակ հանդես է բերել ճկունություն և, որպես Իրանի քաղաքացի, միահյուսել է հայոց բազմադարյան և իրանական հարուստ մշակութային արժեքները՝ աշխարհին հասու դարձնելով իր կերտած յուրատիպ մշակույթին:

Ուսումնասիրությունը բովանդակում է իրանահայ տպագրության և մամուլի խաղացած ահռելի դերի լուսաբանումն ու քննությունը:

Ազգային ժառանգության պահպանման ռազմավարան.
Միջին Արևելքի առաջին տպարանը

Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանը հանդիսանում է Իրանի և, առհասարակ, բովանդակ Միջին Արևելքի առաջին տպարանը:

Տպարանական աշխատանքներն սկսվում են տակավին 1636 թվականից: Վանքի ողջ միաբանությունը լծվում է այդ ծանր ու դժվարին աշխատանքին. տնային պայմաններում պատրաստում են մամուլ, թուղթ, թանաք (մելան) և տառեր: Աշխատանքները տևում են մեկ տարի և հինգ ամիս: 1638 թ. տպագրվում է առաջին գիրքը՝ «Սաղմոս ի Դավիթը»: Ցայժմ հայտնի է, որ Խաչատուր Կեսարացու ժամանակ Նոր Զուղայի տպարանում տպագրված գրքերը չորսն էին՝ «Սաղմոս ի Դավիթ» (1638 թ.)²¹, «Հարանց վարք» (1641 թ.)²², «Խորհրդատետր» (1641 թ.)²³ և «Ժամագիրք ատենի»²⁴ (1642 թ.)²⁵:

«Սաղմոս ի Դավիթ» գիրքը մինչև 1968 թվականը, այսինքն՝ ուղիղ 330 տարի, անհայտ էր մնացել հայ բանասերներին:

«Ալիք» օրաթերթի 1969 թվականի հոկտեմբերի 18-ի համարում «Նոր յայտնություն իրանահայ տպագրական գործում» վերնագրի ներքո Լ. Գ. Մինասյանը գրում է, որ մինչև 1960-ական թվականների վերջերն ընկած ժամանակահատվածը, եղած աղբյուրների համաձայն,

²¹ Գիրքն ունի 572 էջ (տե՛ս Մինասեան Լ. Գ., Նոր Զուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972), Նոր-Ջուղա, «Ս. Ամենափրկիչ» Վանքի տպ., էջ 17):

²² Գիրքն ունի 705 էջ (տե՛ս նույն տեղում, էջ 22):

²³ Գրքույկը բաղկացած է 48 էջից (տե՛ս նույն տեղում, էջ 26):

²⁴ Գիրքն ունի 695 էջ (տե՛ս նույն տեղում, էջ 28):

²⁵ Նշված թվականները ներկայացնում են սույն գրքերի հրատարակության ավարտը:

Իրանում Խ. Կեսարացու կողմից հրատարակված առաջին գիրք համարվում էր 1641 թ. լույս տեսած «Հարանց վարքը»: Այնուհետև տալիս է պարզաբանում, թե ինչպես «Սաղմոս ի Դավիթ» գիրքը 1968 թվականից հետո արդեն աներկբայորեն հնարավոր եղավ ներկայացնել հանրությանը՝ որպես Նոր Ջուղայի տպարանում տպագրված առաջին գիրք [«Ալիք», 18 հոկտեմբերի 1969, թիվ 232 (9343)]:

Լ. Մինասյանի՝ մինչ այդ տվյալ հարցի շուրջ ունեցած թեական մտածումի վերջնական ժխտումը բխում է հետևյալ իրողությունից. Օքսֆորդի համալսարանի՝ 2 միլիոնից ավելի գիրք ունեցող Բոդլեյան գրադարանի գրքերի²⁶ արևելագիտական բաժնի պատասխանատու Դեյվիդ Բարետտը գրքերի ստուգման ժամանակ նկատում է, որ ձեռագրերի մեջ սխալմամբ տեղ է գտել հին տպագիր մի գիրք՝ ընդգրկված գրչագրերի ցուցակում: Ուստի անջատելով այդ բաժնից՝ ցանկանում է մտցնել տպագրվածների ցուցակի մեջ՝ երևան բերելով իրականությունը: Պարզվում է այդ գիրքը «Սաղմոս ի Դավիթ» է՝ տպագրված 1638 թ. Նոր Ջուղայում: 1968 թ. սեպտեմբերին երաժիշտ և ջութակահար Մանուկ Բարիքյանը, իսկ 1969 թ. հուլիսին Դ. Բարետտն այդ մասին տեղեկացնում են²⁷ Լ. Գ. Մինասյանին: Վերջինս էլ, Մ. Բարիքյանի և Դ. Բարետտի միջոցով ստանալով «Սաղմոսի» առաջին թերթի և հիշատակարանի լուսապատճեններն, աճապարեց այդ մասին ակնարկ հրապարակել մամուլում: Հատկանշական է, որ Լ. Գ. Մինասյանի սույն հոդվածը տպագրվել է նաև Բեյրութում հրատարակվող «Այգ» օրաթերթի 1969 թ. հոկտեմբերի 23-ի համարում [«Այգ», 23 հոկտեմբերի 1969, թիվ 5023]: «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի 1969 թ. դեկտեմբերի 3-ի համարը ևս անդրադարձավ կարևորագույն այս լուրին: Այնտեղ ներբերված է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տպագիր գրականության բաժնի վարիչ Սարգիս Սարգսյանի «Նոր Ջուղայի տպարանի երախայրիքը» վերտառությամբ ակնարկը, որտեղ հեղինակը նշում է, որ հայ գրքի տպագրության պատմության մեծ գիտնականներ Գարեգին Զարբհանայանը, Լեոն, Թեոդիկը, Գարեգին Լևոնյանը և այլք, հենվելով Նոր Ջուղայում 1641 թ. հրատարակված «Հարանց վարքի» հիշատակարանի վրա, հանգել են այն եզրակացությանը, որ Նոր Ջուղայի տպարանի առաջին հրատարակությունը եղել է «Հարանց վարքը», և դա ճիշտ չէ: Նա ներկայացնում է մինչ այդ հայագիտությանն անհայտ առաջին գրքի՝ Նոր Ջուղայում 1638 թ. հրատարակված «Սաղմոսի»՝ Քեմբրիջի համալսարանում²⁸ պահվելու իրողության բացահայտումը և հաղորդում Մատենադարանի՝ վերջինիս լուսապատճենն ստանալու մասին [«Հայրենիքի ձայն», 3 դեկտեմբերի 1969, թիվ 49 (228)]:

«Հարանց վարքն» իր ծավալով գերազանցում էր Խ. Կեսարացու կողմից Նոր Ջուղայի տպարանում հրատարակված մյուս գրքերին: Նորահիմն տպարանի համար այն իր տեսակի մեջ կոթողային գործ էր:

Մինչև 1966 թվականը «Խորհրդատետր» գրքի՝ Նոր Ջուղայի տպարանում տպագրված լինելու մասին որևէ տեղեկություն չկար: Եվ ահա «Միոն» ամսագրի 1966 թվականի յոթերորդ համարում հրատարակված Լ. Մինասյանի՝ «Նոր-Ջուղայում 1641 թուին տպագրուած «Խորհրդատետր»ը» վերնագիրն ունեցող հոդվածում կարդում ենք. «.... գտնուած մի նոր գրքով պարզուած է որ Խաչատուր Վարդապետի 1641 թուին տպագրած «Հարանց Վարք» գրքի հետ կամ դրանից յետոյ, տպագրուել է նաեւ մի այլ գիրք՝ «Խորհրդատետր» անունով» [Մինասեան, 1966, 357]:

Լ. Մինասյանը գրում է. «Խաչատուր Կեսարացու տպարանը, որ իր տեսակի մեջ կարելի է գիտենբերգեան ե[ր]կրորդ գիւտը համարել, շատ կարճ կեանք է ունեցել» [Մինասեան, 1972, 34]:

Երկպառակությունների պատճառով այրվում են տպարանն ու մամուլը. մնում են միայն որոշ թվով տառեր և մի քանի տառաշարի կաղապարներ:

²⁶ 1960-ական թվականներին Բոդլեյան գրադարանի գրքերի արևելագիտական բաժնում ընդգրկված էին հայերեն 92 ձեռագիր և շուրջ հազար հատոր տպագիր գրքեր (տե՛ս «Ալիք», 18 հոկտեմբերի 1969, թիվ 232 (9343)):

²⁷ Այդ մասին ժամանակին տեղեկացվում է նաև Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանի (այժմ՝ Հայաստանի ազգային գրադարան) հնատիպ գրքի մատենագիտական բաժնի աշխատողներին:

²⁸ Ս. Սարգսյանը, թյուրիմացաբար կամ վրիպակի արդյունքում, Օքսֆորդի փոխարեն Քեմբրիջ է նշում:

Խաչատուր Կեսարացին, Նոր Զուղայի տպարանը զարգացնելու և նոր ու ամուր հիմքերի վրա դնելու համար, առաջին գրքի տպագրությունից հետո իր ուշիմ աշակերտներից Հովհաննես վարդապետ Քթրշենցին ուղարկում է Եվրոպա: Հովհաննես վարդապետն այնտեղ պետք է ծանոթանար տպագրական աշխատանքներին և նոր գիտելիքներով ու մամուլով վերադառնար:

Հովհաննես վարդապետը 7 տարի (1639-1646 թթ.) անցկացնում է Եվրոպայում: Նա, Բուլղարիայի Լիվոռնո քաղաքում 1644 թ. տպագրելով «Գիրք եւ Սաղմոսք Դավթի որ եւ Սաղմոսարան կոչի» գրքույկը, ուղարկում է իր ուսուցիչ Խաչատուր Կեսարացուն:

Իր տպագրական աշխատանքների ընթացքում Հովհաննես վարդապետը Եվրոպայի տարբեր հարանվանությունների պատկանող կղերականների կողմից ենթարկվում է խիստ հալածանքների, սակայն, այդուհանդերձ, հաջողում է իր առաքելության մեջ և 1646 թ. վերադառնում է Նոր Զուղա՝ իր հետ բերելով մամուլ և տառեր:

Հովհաննես վարդապետը 1647 թ., չնայած հարուցված դժվարություններին, տպագրում է «Գիրք տումարաց որ եւ Պարգատումար կոչի» գիրքը, ապա ձեռնարկում տպագրել «Աստուածաշունչը», որը մնում է թերի: Տպագրվում են նաև այլ գրքեր: Այնուհետև վարդապետը մեկնում է Էջմիածին, ձեռնադրվում եպիսկոպոս, ապա ուղարկվում Հին Զուղա, որտեղ էլ սպանվում է [Գեորգեան, 1957, 475]:

Հովհաննես վարդապետի՝ Նոր Զուղայից հեռանալուց հետո դադարում են նաև տպագրական աշխատանքները: Սակայն 1687 թ. Նոր Զուղայի կաթոլիկ և առաքելական եկեղեցիների հայրերի միջև ծագած բուռն վեճերի և անհամաձայնության պատճառով Հովհաննես վարդապետի՝ Եվրոպայից բերած մամուլը կրկին գործի է դրվում: Տպագրության են հանձնվում երեք գիրք՝ «Գիրք ատենական որ ասի վիճաբանական» (1687 թ.), «Գիրք ժողովածոյ ընդդեմ երկաբնակաց» (1688 թ.), «Գիրք համառոտ վասն իսկապես և ճշմարիտ հաւատոյ» (1688 թ.): Հատկանշական է, որ վերջին գրքի յուրաքանչյուր գլխի վերնագիր ունի լատիներեն թարգմանություն՝ լատինատառ, ինչը վկայում է, որ ավելի քան երեք դար առաջ Հովհաննես վարդապետը Եվրոպայից գնած մամուլի և հայերեն տառերի հետ բերել է նաև եվրոպական տառեր: Հովհաննես վարդապետի՝ Եվրոպայից բերած մամուլից կամ տպագրական պարագաներից այժմ մնում են միայն տառերի մայրեր և մի շարք պղնձե կլիշե-կաղապարներ [Սպահանի հայոց թեմի կայքէջ]:

Այնուհետև իրանական կառավարությունը փակում է տպարանը: Պատճառն այնտեղ տպագրված գրքերում Ղուրանին հակառակ նյութերի առկայության մասին գրպարտությունն էր: Սակայն վկայություն կա այն մասին, որ տպարանի փակվելուց հետո վիճաբանական մամուլի միջոցով տպագրվել են դասագրքեր և այլ հրատարակություններ [Գեորգեան, 1957, 475-476]:

Վանքի տպարանը 189 տարի փակ մնալուց հետո 1877 թ. վերսկսում է իր աշխատանքը: Այդ շրջանի տպարանի մամուլը, որը երրորդը կարելի է համարել, նվիրել էր Ճավայի բնակիչ ջուղայեցի վաճառական Մանուկ Հորդանանյանը: Վերջինս 1844 թ., Եվրոպայից գնելով մամուլ և տառեր, նվիրում է վանքին, սակայն մամուլի կտորներն իրար ամրացնող վարպետ չլինելու պատճառով տպարանական կազմաձևերը մնում են անգործածելի ամբողջ 33 տարի: 1877 թ. Նոր Զուղայի թեմակալ առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսը վերաբացում է տպարանը, նորոգում մամուլը: 1892 թ. Կովկասից բերվում են նոր տառեր [Նույն տեղում, 476]:

Վանքի՝ «Արծիվ» կոչվող այս մամուլի օգտագործումը տևում է մինչև 20-րդ դարի սկիզբը: Այնուհետև այն, որպես մաշված և հնացած իր, հայտնվում է պահեստում:

Նոր թանգարանի հիմնումից հետո այն դրվել է ցուցադրության:

1904 թ. Նոր Զուղայի տպարանական գործը նոր թափ է ստանում: Այդ թվականին բաքվաբնակ Թումանյան եղբայրներն, իրենց հանգուցյալ եղբոր՝ Հովսեփ Թումանյանի հիշատակին, վանքի տպարանին են նվիրում ժամանակի արագատիպ մի մամուլ՝ իր բոլոր հարմարություններով:

1971 թվականի հոկտեմբերին վաստակաշատ ուսուցչուհի Վիկտորյա Շահբազյանը, ընդառաջ գնալով թեմակալ առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սարգիսյանի կոչին, իր միակ որդու՝ Էմիլի հիշատակին, տպարանին է նվիրում գերմանական «Հայդելբերգ» գործարանի արտադրության ինքնաշխատ արդիական մի մամուլ: Այն թեև տպագրական չափով փոքր,

սակայն արագընթաց էր. մեկ ժամում տպելով մինչև 5500 օրինակ՝ հնարավորություն էր տալիս աշխատանքներն արագ կատարել: Ի լրումն այս մամուլի՝ Վ. Շահբազյանի եղբայր Մարգիս Մարտիրոս տպարանին նվիրեց մեկ կայծի ուժով աշխատող չեխոսլովակյան «Մաքսիմա» անունով արդիական կտրիչ մեքենա: Այն փոխարինեց ձեռքով աշխատող նախկին կտրիչին:

Հիմնադրման օրից մինչ 19-րդ դարի վերջերն ընկած ժամանակահատվածը տպարանում հրատարակված գրականության (գրքեր, այդ թվում՝ դասագրքեր, ազդեր) լեզուն գրաբարն էր: 19-րդ դարի վերջերից սկսեցին լույս ընծայվել նաև աշխարհաբարով գրքեր՝ դառնալով գերակշռող: Գրաբարն աստիճանաբար տեղի է տալիս աշխարհաբարին:

Տպարանի՝ աշխարհաբարով (ի մասնավորի՝ Ջուղայի բարբառ) առաջին գիրքը 1878 թ. տպագրված Հ. Բագրատունու «Տարերք քերականութեանն» է: Այն աշխարհաբարի է վերածել Մեսրոպ քահանա Դավթյանը: Հայոց ազգային դպրոցներում այն պետք է օգտագործվեր որպես ձեռնարկ [Սպահանի հայոց թեմի կայքէջ]:

Նոր Ջուղայի տպարանում է հրատարակվել առաջին «Այբբենարանը» (1772 թ.):

Ամենաշատ տպագրված գրքերը եղել են դասագրքերը, օրացույցները, տեղեկագրերը, կրոնական և եկեղեցական գրքերը և որոշ չափով՝ կենսագրական ու պատմական գրքերը: Պատմական գրքերի մեջ ամենից արժեքավորն ու կարևորը, թերևս, պետք է համարել Հարություն Տեր-Շովհանյանցի «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան» երկհատորյակը (1880-1881 թթ.):

Հրատարակված գրքերի մեջ կարևոր տեղ են զբաղեցնում թարգմանությունները, որոնք սկիզբ առան 20-րդ դարի սկզբներից՝ շարունակվելով մինչև 1920-ական թվականները: Հիշատակելի են Եզնիկ վարդապետ Երկարակեցյանի «Հնդկական», «Ճապոնական» և այլ հեքիաթներն ու Գարեգին քահանա Կիրակոսյանի «Մարտիրոսացած Հայաստան» գիրքը:

Իրանի հայկական տպարանները՝ կրթության և գիտության ջանակիրներ

Իրանահայ տպագրության պատմության 350 տարիների ընթացքում (1636-1988 թթ.) ավելի քան 30 տպարաններ են ստեղծվել. 3-ը՝ Նոր Ջուղայում, 5-ը՝ Թավրիզում (այնտեղ հիմնված տպարաններից առաջինը թվագրվում է 1888 թվականով), 23-ը՝ Թեհրանում (տեղի առաջին հայկական տպարանը հիմնադրվել է 1890 թ.):

Իրանի հայկական տպարանները հայտնի էին հետևյալ անուններով՝ Ս. Ամենափրկիչ վանքի տպարան, Լազարիստ, Ստեփանյան, Ատրպատականի հայոց թեմական տպարան, Իրան, Փարոս²⁹, Ատրպետ, Մարգարյան, Ջավահայ, Մոդերն (Ջադիդ), Բորիս (Վերածնունդ), Իրանչափ, Ալվան, Ալիք, Նուրբախշ (Մասիս), Արաքս, Անի, Նաիրի, Ֆարաբի, Անիվ, Բոսֆոր, Գարուն, Գուտեմբերգ, Գրոհ, Թեհրան, Խայամ, Չափքար, Ռազի, Ռովշանայի և Ֆրանսուա Մալեք-Քարամ, որոնցում օգտագործվել են հայերեն, պարսկերեն, անգլերեն և ռուսերեն տպատառեր:

Հիշյալ տպարաններում տպագրվել են բազմազան նյութեր, հայտագրեր, հրավիրատոմսեր, մամուլ, դասագրքեր, օրացույցներ, երգարաններ, ուսումնասիրություններ և այլն [ՀԱԱ, ֆ. 465, ց. 3, գ. 38, թ. 1]:

Իրանում այժմ շարունակում են իրենց գործունեությունը հայկական հետևյալ տպարանները՝ Ս. Ամենափրկիչ վանքի տպարանը (հիմնադրման թվականը՝ 1636 թ., Նոր Ջուղա), «Ալիքը» (հիմնադրման թվականը՝ 1950 թվականի մայիսի 9, Թեհրան), «Արաքսը» (հիմնադրման թվականը՝ 1954 թ., Թեհրան), «Ֆարաբին» (հիմնադրման թվականը՝ 1975 թ., Թեհրան), «Նաիրին» (հիմնադրման թվականը՝ 1949 թ., Թեհրան):

Իրանի հայկական տպարաններում հրատարակված յուրաքանչյուր երկ հայոց մշակութային ժառանգության պահպանողն ու հանրահռչակողն է:

Իրանահայ մամուլը՝ որպես ազգային ժառանգության պահպանման կտակարար

²⁹ Նույնանուն երկու տպարաններ էին հայտնի՝ հիմնադրված Թեհրանում և Թավրիզում:

Իրանահայ մամուլն աչքի է ընկնում իր հարուստ պատմությամբ: Իրանում հայ մամուլի հրատարակությունը սկզբնավորվեց 19-րդ դարի վերջին տասնամյակում: 1894 թ. Թեհրանում հրատարակվեց իրանահայ առաջին շաբաթաթերթը՝ «Շավիղը» (1894-1897 թթ.) [Մինասեան, 1994, 20-22]: Իրանահայ առաջին պարբերականի հրատարակումից երկու տարի անց Թեհրանում լույս տեսավ մեկ այլ շաբաթաթերթ՝ «Աստղ Արևելյանը» (1896 թ.):

20-րդ դարասկզբին իրենց երթն ազդարարեցին նոր պարբերականներ: 20-րդ դարի առաջին քառորդում իրանահայ համայնքի թերթերի և ամսագրերի մեծ մասը հրատարակվում էր Թավրիզում: Դրանք էին՝ «Գործ» (1903 թ.), «Ազդարար առաջնորդարանի» (1904-1905 թթ.), «Նոր Զուղայի լրաբեր» (1904-1908 թթ.), «Առավոտ» (1909-1911 թթ.), «Թավրիզի հայտարարություններ» (1910-1912 թթ.), «Զանգ» (1910-1922 թթ.), «Աղաղան» («Ղարաղաղ»)՝³⁰ (1912-1914 թթ.), «Միտք» (1912-1914 թթ.), «Խոսք» (1913 թ.), «Օտար փունջեր» (1913 թ.)³¹, «Այգ» (1914-1922 թթ.), «Արշալույս» (1918-1919 թթ.)³², «Պայքար» (1918-1919 թթ.), «Կոհակ» («Գեղասեր»)՝³³ (1918-1919 թթ.), «Մինարեթ» (1919-1921 թթ.):

1905-1911 թթ. տեղի ունեցած Իրանի սահմանադրական հեղափոխությունից հետո հայերեն պարբերականներ հրատարակվեցին նաև Թեհրանում՝ ունենալով ոչ վաղ անցյալի տպագրական ավանդույթ: Այստեղ տպագրվում են «Արշալույս» (1912 թ.), «Առավոտ» (1919-1920 թթ.), «Իրանի աշխատավոր» (1920-1921 թթ.), «Ռանջբար Իրանի» (1921-1923 թթ.), «Բոբոխ» (1920-1942 թթ.)³⁴ թերթերը: Բացի «Բոբոխից»՝ այդ թերթերը 1-3 տարի հրատարակվելուց հետո փակվեցին: Դրանց փոխարինեցին «Նոր կյանք» (1922-1927 թթ.), «Բանվոր» (1923-1925 թթ.) թերթերը, «Նոր պատգամ» ամսագիրը (1924-1925 թթ.)³⁵ և «Գաղափար»³⁶ (1925-1927 թթ.) թերթը, որոնք ևս երկար կյանք չունեցան:

Իրանահայ մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1920-ական թվականների վերջին Իրանի հայ համայնքում, բացի «Բոբոխ» երգիծական պարբերաթերթից, այլ թերթ չի հրատարակվել: Պատճառն Իրանի կառավարության արգելքն էր [«Պարսկահայ տարեցույց», 1929, 151]:

«Բոբոխի» խմբագրակազմը, զավեշտաթերթի բովանդակությանն ու կոչմանը հարիր, հանդես է եկել հետևյալ երգիծական մականուններով՝ Ռումբունի, Ղամիշ, ընկեր Կուլտուր, Մախաթ, Զուռնա, Բիզ, Ակլիբաս և Կոտոշ:

Զավեշտաթերթի էջերում իր պատվավոր տեղն ունի Սուսան բաջին: Թերևս, ոմանք մինչև օրս էլ չգիտեն, որ Սուսան բաջու սրամիտ «սոհբաթների» (գրույցների) հեղինակն է «Վերածնունդ» և «Բոբոխ» թերթերի խմբագիր Հայկ Գարագաշը: Չգիտեն, որ նրա գրչին են պատկանում թերթում ներբերված ժամանակի իրանահայության իրական կյանքը պատկերող փոքրիկ նկարները: Սուսան բաջու անվան ներքո Հ. Գարագաշը ներկայացնում էր հասարակության տարբեր խավերի ու հոսանքների բացասական, հիվանդագին, մռայլ ու տգեղ կողմերը, թերություններն ու բացերը և անաչառ քննադատության ենթարկում ու ծաղրում դրանք: Բարոյախրատական «սոհբաթներով» նա կոչ է անում հասարակությանը հնարավորինս զերծ մնալ կյանքի՝ օրավուր կլանող արատավոր երևույթներից, հարգել ընտանեկան բարքերն ու ավանդական

³⁰ «Ղարաղաղ» է վերանվանվել 1913 թվականի մայիսից:

³¹ Լույս է տեսել հանդեսի միայն առաջին համարը:

³² Այն 1912 թ. Թեհրանում լույս ընծայված նույնանուն շաբաթաթերթն է՝ 6 տարի անց:

³³ «Կոհակ» անվամբ հրատարակվող ալմանախը 1919 թ. վերանվանվեց «Գեղասեր»:

³⁴ 1930 թվականի փետրվարի 19-ից լույս է տեսել նույն թվականի փետրվարի 5-ից Թեհրանում հրատարակվող «Վերածնունդ» թերթի 3-րդ համարի հետ միասին՝ որպես վերջինիս հավելված՝ այդ կարգավիճակում մնալով մինչև 1942 թվականը: 1933-1936 թթ. ունեցել է «Մանկական բոբոխ» էջը:

³⁵ «Նոր պատգամ» գրական-գեղարվեստական ամսագիրն իր շուրջը համախմբեց ժամանակի իրանահայ հայտնի գրողներին:

³⁶ 1926 թ. թերթն ունեցել է «Նոր գաղափար» անունը կրող գրական, գիտական, քաղաքական և հասարակական հանդես-հավելվածը:

կենցաղավարությունը: Սուսան բաջու «սոհբաթները»՝ ամփոփված մեկ հատորում, լույս տեսավ 1940 թ. Թեհրանում³⁷:

«Բոբոխի» 1930 թվականի հունվարի 3-ի թիվ 55-56-ում նշվում է ժողովրդի պահանջները փոքրիշատե բավարարելու համար թերթում նոր՝ գրական, հասարակական, կես բժշկական, հետաքրքրական և այլ բաժիններ ավելացնելու իրողության, այդ իսկ պատճառով թերթի անվան փոփոխության կամ երկու առանձին թերթերի բաժանվելու անհրաժեշտության առաջ կանգնելու, գերադասելով վերջինը՝ «Վերածնունդ» քաղաքական, հասարակական, գրական թերթի լույսընծայման արտոնությունը ձեռք բերելու և այդուհետ, որպես «Վերածնունդ» թերթի ձրի հավելված, իր նախկին դրությանը վերադառնալով՝ սոսկ զավեշտաթերթ հրատարակվելու մասին [Բոբոխ, 3 հունվարի 1930, թիվ 55-56]:

Իրանի հայ համայնքի զարթոնքի գործում մեծ դեր խաղացին Թեհրանում հրատարակվող «Նոր խոսք» (1930 թ.), «Վերածնունդ» (1930-1953 թթ.), «Ալիք» (1931 թվականից ցայսօր), «Արուսյակ» (1935-1936 թթ. և 1942 թ.) թերթերը, «Նոր հասկեր» (1935-1936 թթ.) երկշաբաթյա հանդեսը, «Նավասարդ» հանդեսը (1937-1939 թթ.), 1942-1948 թթ. ընդմիջումներով լույս տեսնող «Նոր աղբյուր» մանկապատանեկան (1944 թ. չի հրատարակվել) և «Լույս» ամսագրերը (1943-1944 թթ.), իրանահայ կյանքի արատավոր կողմերը խարազանող «Ցախավել» երգիծական պատկերազարդ երկշաբաթաթերթը³⁸ (1943-1958 թթ.) և այլ պարբերականներ՝ «Աշխատանք» (1946-1947 թթ.), «Արմենուհի» (1949-1955 թթ.), «Արփի» (1949-1956 թթ.), «Լուսաբեր» մանկապատանեկան (1949-1971 թթ.), «Պահակ» (1951-1952 թթ.), «Նոր այգ» (1951-1953 թթ.), «Ալիք» (1961-1963 թթ.)³⁹, «Ջահակիր» (1963-1990 թթ.), «Ալիք պատանեկան» (1969-1978 թթ.)⁴⁰, «Հուր» (1971-1974 թթ.), «Հեղափոխության ճամփով» (1979-1982 թթ.), «Փյունիկ» (1979-1983 թթ.), «Ծիածան» (1982-1988 թթ.), «Արաքս» (1987 թ.)⁴¹: Դրանց միջոցով իրանահայերը հաղորդակից էին դառնում երկրի ներքաղաքական կյանքին, միջազգային դրությանը, Խորհրդային Հայաստանի նվաճումներին:

Կարևոր և արժանահավատ տեղեկատվության լայն հարթակ է նաև 2007-2018 թթ. Թեհրանում հրատարակված «Հույս» երկշաբաթաթերթը: Հանրամատչելի, ոչ գաղափարախոսական, ոչ կուսակցական անկախ երկշաբաթաթերթն իր էջերում արտացոլել է իրանահայ համայնքի կարևոր իրադարձությունները և հասարակությանն ընտելացրել քննադատության և հանդուրժողականության:

Իրանի հայ համայնքում 20-րդ դարի 30-ական թվականներից մինչ օրս բացի «Ալիքից» մնայուն և տևական կյանք ունեցող թերթ չի եղել: «Ալիք» օրաթերթը սկզբնապես հրատարակվել է որպես շաբաթաթերթ, 1935 թվականի հունվարի 17-ից՝ երկօրյա թերթ, իսկ 1941 թվականից՝ օրաթերթ: Հրատարակվել է առանց դադարի: Միակ բացառությունը Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի նախօրյակին էր: Իր մասնակցությունը բերելով համաիրանական մամուլի գործադուլին՝ 1979 թվականի հունվարից շուրջ 40 օր թերթը չհրատարակվեց [«Ալիք» օրաթերթի կայքէջ]:

Թերթն ունի ՀՀԴ կուսակցության գաղափարաքաղաքական ուղղվածություն, և բովանդակության առանցքն է կազմում Հայ դատի հետապնդումը: Հայ ժողովրդի բովանդակ շահերի պաշտպանությունը, իրանահայ համայնքի հայեցի դիմագծի պահպանումը և Իրանի բարգավաճմանն ու վերելքին նպաստելը «Ալիքի» հնարավորությունների սահմաններում են: Համայնքի ներքին կյանքից բացի «Ալիքը» լուսաբանում է նաև Իրանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի առավել կարևոր խնդիրները:

³⁷ Տե՛ս Սուսան բաջու սոհբաթներից, յառաջաբան՝ բանասեր-քննադատ Արամ Երեմեանի, հրատ.՝ Լեւոն Մելիքի, 1940, Թեհրան, «Բոբոխ» տպ.:

³⁸ 1943-1944թթ. այն հրատարակվել է որպես ժողովածու (1-8-րդ համարներ):

³⁹ Նկատի ունենալ «Ալիք» ամսագիրը:

⁴⁰ Այն, որպես «Ալիք» օրաթերթի հավելված, վերահրատարակվում է 2010 թվականի մարտից:

⁴¹ Թերթը սկսել է հրատարակվել «Արագ» անվամբ, «Արաքս» է վերանվանվել 1987 թվականի 4-րդ համարից (1987 թվականի հունիս):

Թեհրանի հայոց թեմակալ առաջնորդ Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը 1989 թվականի օգոստոսի 4-ին թերթի խմբագրատանն ասել է. «Ալիքի» առավելությունն այն է, որ տներից ներս մտնելիս հայկականություն է տանում» [Մանուկյան, 2000, 49]:

«Ալիքը» նախապես ունեցել է շեշտված հակախորհրդային դիրքորոշում՝ ի նպաստ հայ ժողովրդի անկախության վերականգնման:

Հայաստանի անկախացումից հետո պաշտպանել է փոխադարձ շահերի վրա հիմնված և օրավուր զարգացող Իրան-Հայաստան կապերի ամրապնդումը:

«Ալիք» օրաթերթն ունի իր սեփական տպարանը և խմբագրատան շենքը: Հրատարակել է իրանահայ դպրոցների դասագրքեր, հայերեն ու պարսկերեն գրքեր (այդ թվում՝ մասնագիտական գրականություն), օրացույցներ և տպագրական այլազան պատվերներ կատարել: «Ալիքի» խմբագրատունը 1998 թ. փոխադրվեց նոր շենք, իսկ 2006 թ. այնտեղ տեղափոխվեց տպարանը [«Ալիք» օրաթերթի կայքէջ]:

Ներկայում օրաթերթը լույս է տեսնում 4350 տպաքանակով, բաժանորդներ ունի Իրանի հայահոծ քաղաքներում և այլ երկրների հայ համայնքներում: «Ալիքն» ունի սեփական կայքէջ: 2001 թվականի հունվարի 23-ից թերթը տեղադրվում է համացանցում [Նույն տեղում]:

Իրանի հայ համայնքում այժմ էլ իր գործունեությունն է շարունակում «Արաքս» թերթը: Անդրադառնալով իրանական և իրանահայ կյանքին, Հայաստանում, ոչ վաղ անցյալում նաև Արցախում տեղի ունեցող իրադարձություններին՝ թերթը կարևորում է երկու հարևան ժողովուրդների միջև տեղեկատվական կամուրջ հանդիսանալու դերը՝ տրամադրելով հուսալի և ճշտագրված տեղեկատվություն, պարսիկ ընթերցողին ծանոթացնում պարսկերենով հրապարակվող Հայկական հարցին ու հայոց պատմությանը վերաբերող նյութերին:

Իրանահայ տարեգրքերը՝ տեղեկատու փարոս

Հայկ Գարագաշը մեծ գոհողության գնով 1927, 1929 և 1930 թվականներին հրատարակել է «Պարսկահայ տարեցույցի» երեք մեծադիր հատորները, որոնք Իրանի հայ համայնքի պատմության ուսումնասիրությամբ զբաղվողների համար սկզբնաղբյուրի նշանակություն ունեն:

«Պարսկահայ տարեցույցի» հույժ արժեքավոր այս երեք հատորներն ունեն տեղեկագրական, գրական-գեղարվեստական, կես բժշկական, կենսագրական, հետաքրքրական և զավեշտական անվանումներն ստացած բաժիններ: Բաժիններից յուրաքանչյուրն աչքի է ընկնում տեղեկատվական նյութի առատությամբ: Չսահմանափակվելով միայն Պարսկաստանի և պարսկահայերի վերաբերյալ տեղեկությունների հաղորդմամբ՝ «Պարսկահայ տարեցույցի» հատորները բովանդակում են նաև այլ երկրների ու ժողովուրդների մշակույթի նշանավոր գործիչների բացահայտմանն ուղղված հազեցած նյութ: «Պարսկահայ տարեցույցի» յուրաքանչյուր գրքում առկա է տվյալ տարվա օրացույցը՝ տոների, տաղավարների և տարեդարձերի վերաբերյալ իրազեկող նյութի ընդգրկմամբ [«Պարսկահայ տարեցույց», 1927, 1929, 1930]:

1969, 1970 և 1984 թվականներին Թեհրանում լույս տեսան «Բաֆֆի» տարեգիրքի երեք հատորները: Տարեգրքի հիմնադիր և խմբագիր Տաճատ Պողոսյանը հրատարակեց տարեգրքի առաջին և երկրորդ հատորները, իսկ երրորդ հատորը 1971 թ., թերի լինելու պատճառով, հնարավոր չեղավ լույս ընծայել: Այն ոչ լրացված ձևով հրատարակվեց 1984 թ. արդեն հանգուցյալ Տ. Պողոսյանի դստեր՝ Արմինե Պողոսյանի կողմից:

Տարեգրքի հատորներում ներկայացված են իրանահայության առօրյան, Խորհրդային Հայաստանի տնտեսական դրությունը, քաղաքական իրավիճակը, սփյուռքահայ և խորհրդահայ զգալի թվով գրողների, հրապարակախոսների, պատմաբանների արժեքավոր ստեղծագործությունները, գաղթօջախներում և հայրենիքում տեղի ունեցած մշակութային կարևոր իրադարձությունների, հոբելյանների վերաբերյալ նյութեր: Հրապարակվել են վավերագրեր, հուշեր, որոնք կարող են օժանդակ աղբյուր հանդիսանալ Սփյուռքի պատմության ուսումնասիրման համար: Տարեգիրքն անդրադարձել է Հայաստան-Իրան միջպետական հարաբերություններին, իսկ առանձին բաժնով զետեղել հայ եկեղեցու ազգային-կրոնական և

Իրանի պետական-կրոնական տոների ժամանակացույցները [«Բաֆֆի» տարեգիրք, 1969, 1970, 1984]:

Իրանահայ Սեպուհ Ամիրխանյանը, շարունակելով տարեգրքի հրատարակման ավանդույթը, 2004, 2008 և 2010 թվականներին Թեհրանում լույս ընծայեց «Նաիրի» տարեգրքի երեք ստվարածավալ հատորները:

Իրանահայ օրացույցները՝ պատմության խոսուն վկաներ

Օրացույցի հրատարակումն իրանահայոց մեջ դարավոր անցյալ ունի: Իրանահայ առաջին օրացույցի հրատարակման պատիվը պատկանում է ջուղայեցի քահանա Դիոնիսիոս Տեր-Եղիազարյանին: Օրացույցը տպագրվեց 1863 թ. Նոր Ջուղայում: Այն պարունակում է տոմարական և այլ տեղեկություններ:

Հայկական օրացույցներ են հրատարակվել Նոր Ջուղայում, Թավրիզում և Թեհրանում: Այսօր էլ իրենց գոյությունը պահպանում են Թեհրանում հրատարակվող «Բաֆֆի» (հրատարակվում է 1942 թվականից, հիմնադիր՝ Տաճատ Պողոսյան), «Նաիրի» (հրատարակվում է 1954 թվականից, հիմնադիր՝ Սամուել Սարուխանյան) և այլ օրացույցներ:

Մեր դարի առաջին քսանամյակում ծնունդ առան և իրենց գործունեության կարճատև կյանքն այդ ժամանակահատվածում ամփոփեցին «Մերունդ» (կազմող՝ Ժոզեֆ Գրիգորյան), «Ընտանիքի օրացույց» (կազմողներ՝ Անահիտ Հովսեփյան և Կարինե Ջոհրաբյան) և այլ օրացույցներ:

Իրանահայ գրիչը իսլամական հանրապետության վերահսկող աչքի ներքո

Իրանում հայ տպագիր մամուլը վերահսկողության է ենթարկվում Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետև՝ ԻԻՀ) մշակույթի և իսլամական առաջնորդության նախարարության կողմից:

ԻԻՀ սահմանադրության 24-րդ հոդվածը սահմանում է. «Մամուլը և հրատարակչությունը ազատորեն կարող են արտահայտել իրենց տեսակետները, եթե դրանք չեն հակասում իսլամի սկզբունքներին և չեն խախտում հանրության իրավունքները: Այդ խնդրին առնչվող մանրամասները որոշվում են օրենքի կողմից» [Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), 2005, 44]: Ի լրացումն դրա՝ 1979 թվականի օգոստոսի 6-ին ԻԻՀ-ում ընդունվել է մամուլի մասին օրենք: Իսկ 1984 թ. ուժի մեջ մտավ մի նոր օրենք, որով ցայսօր կարգավորվում է մամուլի բնագավառի գործունեությունը: Ըստ այդ օրենքի՝ երկրի բոլոր կրոնական փոքրամասնությունների կողմից հրատարակվող մամուլը, գրքերը, առհասարակ, ցանկացած հրատարակություն հսկողության և գրաքննության է ենթարկվում ԻԻՀ մշակույթի և իսլամական առաջնորդության նախարարության կրոնական փոքրամասնությունների հարցերի գրասենյակի կողմից: Այդ գրասենյակի միջոցով է իրականացվում կրոնական փոքրամասնությունների կողմից կամ նրանց մասին գրքերի հրատարակության և ամբողջ մամուլի վերահսկումը, ինչպես նաև օտարերկրյա քարոզիչների էլումուտը երկիր և այլն: Հայաստանի պատմության, իրանահայերի պատմության, Իրանի քրիստոնյաների պատմության մասին բոլոր աշխատանքները, անկախ հեղինակի ազգային պատկանելությունից, գրաքննության են ենթարկվում վերոհիշյալ կառույցի կողմից և ապա միայն ստանում տպագրության թույլտվություն [Բայբուրդյան, 2013, 123]: Հատկապես մանրագին գրաքննության են ենթարկվում պատմական կամ քաղաքական բովանդակություն ունեցող, դրանց շարքում՝ հայ կուսակցությունների և քաղաքական խմբակցությունների պատմությանն ու գործունեությանը նվիրված աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում դրանք վերանայվում են, համապատասխան ուղղումներ արվում և դրանից հետո միայն տպագրվում: Կարող է նաև արգելվել գրասենյակի կողմից:

Թերթ հրատարակելու համար ևս կրոնական փոքրամասնությունները պետք է դիմեն նշված գրասենյակի մամուլի բաժին և միայն համապատասխան փաստաթղթային ձևակերպումներից հետո ստանան տպագրության թույլտվություն:

Եզրակացություն

Իրանահայ տպագրությունն ու մամուլն ազգային ինքնության պահպանման և մշակութային արժեքների տարածման միջոցներ են: Տպագրական արտադրանքը օգնում է պահպանել և նոր սերունդներին փոխանցել հայոց լեզուն, մշակույթը և պատմությունը:

Իրանահայ տպագրությունն ու մամուլը, ստանձնելով կրթադաստիարակչական դեր, հայ երեխաներին և երիտասարդներին մղում են հայերենի ուսուցման, մատուցում հայկական մշակույթին ու պատմությանը վերաբերող նյութեր:

Իրականացնելով մշակույթի հանրահոշակման առաքելություն՝ իրանահայ մամուլն ընթերցող լայն շրջանակներին ծանոթացնում է հայ գրականության ու արվեստի գոհարներին:

Իրանահայ մամուլն ապահովում է համայնքային միասնություն՝ տեղի հասարակական գործիչներին ու կազմակերպություններին համախմբելով համայնքային կարևոր խնդիրների շուրջ:

Իրանահայ մամուլը երբեք չի սահմանափակվել համայնքային կյանքի լուսաբանմամբ. այն արձագանքել է Իրանի ներքին քաղաքական և միջազգային զարգացումներին, հաճախ շեշտել հայ համայնքի դիրքորոշումները և մտահոգությունները՝ այդպիսով հարստացնելով հանրային քննարկումները:

SUMMARY

The study of the Iranian-Armenian printing and periodicals is important for the completion of Armenian studies and the total unfolding of Armenians' potential. Throughout many centuries living outside their homeland, Iranian Armenians were the bearers and enrichers of the Armenian language, culture and rich traditions. Based on valuable sources, periodical coverage and public research, the study presents the birth and emergence of the Iranian-Armenian press in an unbiased, comprehensive and inclusive manner, and portrays the role and significance of the Iranian-Armenian periodicals in cultural heritage promotion. This article covers the role of the Iranian-Armenian printing and periodicals from 1638 to the present.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ալիք», 18 հոկտեմբերի 1969, թիվ 232 (9343):
2. «Ալիք» օրաթերթի կայքէջ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://armnational.am/en/c/alik-daily-tehran>, 11.09.2024:
3. «Այգ», 23 հոկտեմբերի 1969, թիվ 5023:
4. Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, «Լուսակն», 2013, 211 էջ:
5. «Բոբոխ», 3 հունվարի 1930, թիվ 55-56:
6. Գեորգեան Կ., Ամենուն տարեգիրքը 1958, Ե տարի, Պէյրութ, «Մշակ», 1957, 720 էջ:
7. Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), թարգմանեց՝ Գառնիկ Բադալյանը (Ոչ պաշտոնական թարգմանություն), Թեհրան, «Նաիրի» հրատ., 2005, 124 էջ:
8. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 465 (Փաստաթղթերի հավաքածու իրանահայ գաղթավայրերի վերաբերյալ), ց. 3, գ. 38:
9. «Հայրենիքի ձայն», 3 դեկտեմբերի 1969, թիվ 49 (228):
10. Մանուկյան Մ., Իրանահայ գաղթօջախի առօրյան, Երևան, ա. հ., 2000, 74 էջ:
11. Մինասեան Լ. Գ., Իրանահայ պարբերական մամուլը 1894-1994, Նոր Զուղա, Մք. Ամենափրկիչ Վանքի տպ., 1994, 104 էջ:

12. Մինասեան Լ. Գ., Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972), Նոր-Ջուղա, «Ս. Ամենափրկիչ» Վանքի տպ., 1972, 175 էջ:
13. Մինասեան Լ. Գ., Նոր-Ջուղայում 1641 թուին տպագրուած «Խորհրդատետր»ը // «Միոն», Երուսաղէմ, 1966, յուլիս, թիւ 7, էջ 357-358:
14. «Պարսկահայ տարեցոյց», առաջին տարի, Թէհրան, «Փարոս», 1927, 276 էջ:
15. «Պարսկահայ տարեցոյց», երկրորդ տարի, Թէհրան, «Փարոս», 1929, 443 էջ:
16. «Պարսկահայ տարեցոյց», երրորդ տարի, Թէհրան, «Փարոս», 1930, 375 էջ:
17. Սպահանի հայոց թեմի կայքէջ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.norjughai.ir/u-a-vanp/տպարան>, 06.09.2024:
18. Սուսան բաջու սօհրաթներից, յառաջաբան՝ բանասէր-քննադատ Արամ Երեմեանի, հրատ.՝ Լեւոն Մելիքի, 1940, Թէհրան, «Բոքոյա» տպ., 202 էջ:
19. «Բաֆֆի» տարեգիրք, Ա տարի, Թէհրան, «Մոդերն», 1969, 583 էջ:
20. «Բաֆֆի» տարեգիրք, Բ տարի, Թէհրան, «Մոդերն», 1970, 687 էջ:
21. «Բաֆֆի» տարեգիրք, Գ տարի, Թէհրան, «Մոդերն», 1984, 263 էջ: